ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/82

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2023 թ. N 82

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ (ԱՏՊՔ)**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աթարբեկյան 156

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ.ապրիլի 14-ին քննարկեց «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՏՊՔ, ՄՈՒՀ, Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	28 փետրվարի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում	24 հունիսի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	17-20 հոկտեմբերի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	11 հունվարի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	16 փետրվարի 2023 թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ **Հետազոտություն և զարգացում, Արտաքին կապեր և միջազգայնացում,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:**

ԱՏՊՔ-ն, որպես տարածաշրջանային քոլեջ, իրականացնում է տարբերակված ՄԿԾ-ներ՝ նպաստելով տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարմանը: ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերը /ՄԿԾ/ համապատասխանում են Քոլեջի առաքելությանը, ՈԱԾ-ի նկարագրիչներին, կազմված են ըստ պետական կրթական չափորոշիչների: Կրթական ծրագրերն ունեն նկարագրեր, որտեղ հստակեցված են նպատակները, ներառված են դասավանդման մեթոդների մանրամասն նկարագրություններ: Գործարկվում են ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ: Քոլեջում առկա են գիտելիքի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր: Քոլեջի ջանքերը միտված են ուսանողների գործնական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, սակայն արտադրական պրակտիկաների ծավալը քիչ է:

ԱՏՊՔ-ը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Դասախոսական կազմի կայունությունն ապահովելու նպատակով ձեռնարկվում են երիտասարդ կադրեր ներգրավելու և նրանց առաջխաղացմանն ուղղված հստակ քայլեր, փորձ է արվում ստեղծել Քոլեջի կարիքներին համապատասխան կադրերի ռեզերվ Ներդրվել են դասախոսների դասընթացների փաթեթները (պորտֆոլիո), գործում են դասախոսների գնահատման և խրախուսման մեխանիզմները:

ԱՏՊՔ-ի ռեսուրսային բազան համապատասխանում է կրթական նպատակներին և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը, ձևավորված է ուսումնական միջավայր: Քոլեջն ապահովված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով: ՈՒսանողներն ու դասախոսները բավարարված են տրամադրվող ուսումնական ռեսուրսների օգտակարությունից և հասանելիությունից: Քոլեջն ապահովում է ուսանողների և դասախոսների անվտանգությունը,

անհրաժեշտ է սակայն ստեղծել համապատասխան պայմաններ հատուկ կարիքներ ունեցողների համար:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

ԱՏՊՔ-ի ծավալած գործունեությունը համարժեք է սահմանված առաքելությանն ու նպատակներին, համահունչ է Որակավորումների ազգային շրջանակին: Քոլեջի նպատակներն ու խնդիրներն ամբողջությամբ արտացոլում են շահակիցների կարիքները: Քոլեջում առկա են կառավարման համար անհրաժեշտ խորհրդակցական մարմիններ, որտեղ ներկայացված են արտաքին և ներքին շահակիցները: Սակայն, դեռևս թույլ է ուսանողների ակտիվությունը կառավարման մարմիններում որոշումների կայացման տեսանկյունից:

Կառավարման գործընթացներն ապահովված են անհրաժեշտ փաստաթղթերով: ԱՏՊՔ-ում գործում է կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորում, որը բխում է հաստատության ռազմավարական ծրագրերից: ՄՈՒՀ-ում գործում են տվյալների հավաքագրման և գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Քոլեջը հաշվետու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին:

Որակի ներքին ապահովման համակարգը ՄՈՒՀ-ում գործում է 2020 թվականից: Մշակվել են որակի ապահովման գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, իրականացվում են հարցումներ, դասալսումներ, մասնակցություն քննություններին և այլն, գործարկվում են առանցքային խնդիրների դուրսբերման մշտադիտարկման տարբեր գործիքներ: Քոլեջում որակի ապահովման գործընթացները շարունակական են, միտված են կրթության որակի ապահովմանը: ԱՏՊՔ-ն զգալի առաջընթաց ունի որակի մշակույթի ներդրման և տարածման հարցում:

Կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովումը և համարում է առաջնային ռազմավարական նպատակ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:***

ԱՏՊՔ-ի առաքելությունում և ռազմավարական ծրագրում սահմանված չեն հետազոտության ոլորտում հետաքրքրություններն ու առաջնահերթությունները: 2020թ. հաստատվել է «Հետազոտական աշխատանքների կատարման քաղաքականություն», որում նկարագրված են հետազոտական աշխատանքների կատարման ոլորտում քոլեջի նպատակները, ռեֆերատների, դիպլոմային և կուրսային աշխատանքների ձևաչափերը: Սակայն վերհանված և վերլուծված չեն տարածաշրջանի հետազոտական կարիքները, հետազոտական առաջնահերթությունները համահնչեցված չեն այդ կարիքներին:

Թույլ է հետազոտության և ուսումնառության միջև եղած կապը: ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ գրեթե չկան, առկա են որոշ հետազոտական տարրեր պարունակող աշխատանքներ: Կուրսային աշխատանքները գնահատելու նպատակով փորձ է արված ձևավորել արդյունքային ցուցիչներ, այնուհանդերձ, առաջադրանքները, ռեֆերատները, կուրսային աշխատանքները ուսանողների մոտ չեն զարգացնում հետազոտական վերլուծական հմտություններ:

Հետազոտության ոլորտում քոլեջի առաջընթացի գնահատման ցուցիչներն ընդգրկուն չեն:

Քոլեջն իր տրամադրած կրթության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը, ներքին շահակիցներին և հասարակությանը: Առկա են հարթակներ քոլեջի գործունեության մասին իրազեկելու և գործունեության թափանցիկությունը ապահովելու համար, գործարկվում են հաշվետվողականության ապահովման գործիքներ: Քոլեջում գործում են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, ուր իրենց մասնակցությունն ունեն ուսանողները, դասախոսները, շրջանավարտները, ՈՆԱԿ պատասխանատուն: Հասարակությանը գիտելիքների փոխանցման նպատակով իրականացվում են կարճաժամկետ, լրացուցիչ ծրագրեր:

Քոլեջի ՌԾ-ում որպես նպատակ ամրագրված չեն արտաքին կապերի զարգացումն ու միջազգայնացումը, մշակված չեն արտաքին կապերը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականություն, այլ քոլեջների հետ արտաքին համագործակցությունների հարթակն ակտիվ չէ, վերլուծված և գնահատված չեն գործընկերային համագործակցությունների հնարավորությունները: Վերհանված և ուսումնասիրված չեն քոլեջի հնարավորությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ճանապարհները: Քոլեջը լիարժեք չի օգտագործում արտաքին համագործակցությունների ներուժն իր առջև ծառացած խնդիրների լուծման և կրթական գործընթացների բարելավման նպատակով:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն ըստ էության ներառում է փորձագետների կողմից տրված հիմնական խորհրդատվությունները: Ծրագիրը իրատեսական է, իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ՝

1. **«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4/չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - շահակիցների կարիքների բացահայտման մեխանիզմների կատարելագործմանը,
   - ներքին և արտաքին շահակիցների գործուն մասնակցությանը քոլեջի կառավարչական գործընթացներին,
   - ՄԿԾ-ների բարելավման գործում արտաքին շահակիցների ներգրավումը խրախուսող մեխանիզմների բարելավմանը,
   - արտադրական պրակտիկաների ծավալի մեծացմանը և դրանց արդյունավետությունն ապահովող մեխանիզմների ներդրմանը,
   - բենչմարքինգի քաղաքականության և ընթացակարգերի մշակմանն ու ներդրմանը,

- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
- դասախոսական կազմի արդյունավետության գնահատման, մասնագիտական առաջընթացի ապահովման հստակ մեխանիզմների կիրառմանը,
- հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձևավորմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2023թ.ապրիլի 28